ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-Ջ-ՄԱԱՊՁԲ-18/2-1

ք. Երևան «23» 03 2018թ.

ՀՀ ԷԵԲՊՆ ՋՏՊԿ «Ջրառ» ՓԲԸ-ը ի դեմս տնօրենի պաշտոնակատար Կ. Եփրեմյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և ԱՁ «Աննա Զաքարյան»-ը, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Հննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 606440 (վեց հարյուր վեց հազար չորս հարյուր քառասուն) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն՝ ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀԷԵԲՊՆ ՋՏՊԿ «Ջրառ» ՓԲԸ ՀՀ, ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա «Արդշինբանկ» ՓԲԸ, Նալբանդյան մ/ճ Հ/Հ 2479000059160000, ՀՎՀՀ 00093621 Տնօրենի պաշտոնակատար	Ա/Ձ Աննա Զաքարյան ՀՀ, ք.Երևան Սարկավագի 3-րդ փակուղի տուն 2 «Ինեկոբանկ» ՓԲԸ Կոմիտաս 2 մ/ճ, Հ/Հ 205283221591, ՀՎՀՀ 88194642
---------- Կ. Եփրեմյան /ստորագրություն/ Կ.Տ	----------Ա.Զաքարյան /ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N
«23» 03 2018թ. կնքված
ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-Ջ-ՄԱԱՊՁԲ-18/2-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի									մատակարարման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը**
1	30197646/1	թուղթ A3 ֆորմատի /29,7x42/		Թուղթ A3 ֆորմատի, Թուղթ՝ սպառողական ձևաչափերի, ոչ կավճապատ: Նախատեսված է գրելու, տպագրելու, երկկողմանի պատճենման և գրասենյակային աշխատանքների համար: Ձևաչափը՝ A3 (297 x 420 մմ), սպիտակությունը՝ 95 %-ից ոչ պակաս, 1 մ² մակերեսով թղթի զանգվածը՝ 80 գ,	տուփ	3600	14400	4	Ք. Երևան, Վարդա-նանց փակուղի 8 ա	4	2018 թվականի 1-ին եռամսյակ
2	30197631/1	թուղթ A4 ֆորմատի /21x29,7/		Թուղթ A4 ֆորմատի, չկավճած թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված, 80 գ/մ², (210X297) մմ.:	տուփ	2100	315000	150	Ք. Երևան, Վարդա-նանց փակուղի 8 ա	150	2018 թվականի 1-ին եռամսյակ
3	30197232/1	Թղթապանակ արագակար, թղթյա		Թղթապանակ արագակար, թղթյա, Արագակար կավճած ստվարաթղթից, մետաղական ամրակով, A4 (210x297) մմ ձևաչափի թերթերի համար	հատ	120	16800	140	Ք. Երևան, Վարդա-նանց փակուղի 8 ա	140	2018 թվականի 1-ին եռամսյակ

4	30197233/1	թղթապանակ, թելով, թղթյա		Թղթապանակ, թելով, թղթյա, Ստվարաթղթից կազմեր երկարատև պահման գործերի համար, Բ տիպի, թելակապերով, ստվարաթղթի խտությունը՝ 1,15 գ/սմ3, հաստությունը 0,3-ից մինչև 1,5 մմ:	հատ	120	10800	90	Ք. Երևան, Վարդա-նանց փակուղի 8 ա	90	2018 թվականի 1-ին եռամսյակ
5	30197323/1	կարիչ, 50-ից ավելի թերթի համար		Գրասենյակային կարիչ 50-ից ավել մինչև 120 թերթ մետաղալարե կապերով ամրացնելու համար	հատ	11000	11000	1	Ք. Երևան, Վարդա-նանց փակուղի 8 ա	1	2018 թվականի 1-ին եռամսյակ
6	30197321/1	կարիչ, մինչև 20 թերթի համար		Գրասենյակային կարիչ մինչև 20 թերթ մետաղալարե կապերով ամրացնելու համար	հատ	700	5600	8	Ք. Երևան, Վարդա-նանց փակուղի 8 ա	8	2018 թվականի 1-ին եռամսյակ
7	30197322/1	կարիչ,20-50 թերթի համար		Գրասենյակային կարիչ, 20-ից մինչև 50 թերթ մետաղալարե կապերով ամրացնելու համար	հատ	1300	5200	4	Ք. Երևան, Վարդա-նանց փակուղի 8 ա	4	2018 թվականի 1-ին եռամսյակ
8	30197110/2	կարիչի մետաղալարե կապեր		Կարիչի մետաղալարե կապեր, մեծ N23/15: Տուփի մեջ 1000 հատ	տուփ	620	3100	5	Ք. Երևան, Վարդա-նանց փակուղի 8 ա	5	2018 թվականի 1-ին եռամսյակ
9	30197110/1	կարիչի մետաղալարե կապեր		Կարիչի մետաղալարե կապեր, մեծ N23/8: Տուփի մեջ 1000 հատ	տուփ	350	1750	5	Ք. Երևան, Վարդա-նանց փակուղի 8 ա	5	2018 թվականի 1-ին եռամսյակ
10	30197111/1	կարիչի մետաղալարե կապեր, փոքր		Կարիչի մետաղալարե կապեր, փոքր N10	տուփ/ 1000 հատ	100	2500	25	Ք. Երևան, Վարդա-նանց փակուղի 8 ա	25	2018 թվականի 1-ին եռամսյակ
11	30197112/1	կարիչի մետաղալարե կապեր, միջին		Կարիչի մետաղալարե կապեր,մեծ N23/10	տուփ/ 1000 հատ	200	5000	25	Ք. Երևան, Վարդա-նանց փակուղի 8 ա	25	2018 թվականի 1-ին եռամսյակ

12	30197231/1	Պոլիմերային թաղանթ, ֆայլ		Ֆայլ, Թափանցիկ պոլիմերային թաղանթ, A-4 ձևաչափի թղթերի համար, արագակարներին ամրացնելու հնարավորություն,50 միկրոն:	հատ	10	8000	800	Ք. Երևան, Վարդա-նանց փակուղի 8 ա	800	2018 թվականի 1-ին եռամսյակ
13	30192100/1	ռետին, հասարակ		Ռետին, հասարակ, նախատեսված մատիտով գրվածքները ջնջելու համար: Faber Castell, սպիտակ գույն	հատ	100	3500	35	Ք. Երևան, Վարդա-նանց փակուղի 8 ա	35	2018 թվականի 1-ին եռամսյակ
14	30192121/1	գրիչ գնդկավոր		Գրիչ (գնդիկավոր) կարմիր, Montex Mega կամ համարժեք 1 մմ	հատ	100	3500	35	Ք. Երևան, Վարդա-նանց փակուղի 8 ա	35	2018 թվականի 1-ին եռամսյակ
15	30192121/2	գրիչ գնդկավոր		Գրիչ (գնդիկավոր) կանաչ, 1մմ, Montex Mega կամ համարժեք	հատ	100	2500	25	Ք. Երևան, Վարդա-նանց փակուղի 8 ա	25	2018 թվականի 1-ին եռամսյակ
16	30192121/3	գրիչ գնդկավոր		Գրիչ (գնդիկավոր) սև , 1մմ, Montex Mega կամ համարժեք	հատ	100	4000	40	Ք. Երևան, Վարդա-նանց փակուղի 8 ա	40	2018 թվականի 1-ին եռամսյակ
17	30192121/4	գրիչ գնդկավոր		Գրիչ (գնդիկավոր) կապույտ, 1մմ, Montex Mega կամ համարժեք	հատ	100	16000	160	Ք. Երևան, Վարդա-նանց փակուղի 8 ա	160	2018 թվականի 1-ին եռամսյակ
18	30192720/1	գծանշիչ		Գծանշիչ, Տափակ ծայրով, տարբեր գույնի նշումներ անելու համար	հատ	500	20000	40	Ք. Երևան, Վարդա-նանց փակուղի 8 ա	40	2018 թվականի 1-ին եռամսյակ
19	30192710/1	սոսնձամատիտ, գրասենյակային		Չոր սոսինձ՝ գրասենյակային (սոսնձամատիտ), թուղթ սոսնձելու համար:	հատ	400	20000	50	Ք. Երևան, Վարդա-նանց փակուղի 8 ա	50	2018 թվականի 1-ին եռամսյակ
20	30192137/1	մատիտ, գրաֆիտե միջուկով, հասարակ		Մատիտ (գրաֆիտե միջուկով, հասարակ), HB կարծրությամբ	հատ	70	4900	70	Ք. Երևան, Վարդա-նանց փակուղի 8 ա	70	2018 թվականի 1-ին եռամսյակ

21	30141200/1	հաշվասարք, գրասենյակային		Հաշվասարք, 12 նիշանի սեղանի 18X13.5 սմ չափերով, գործողությունները ցուցադրումով վահանակի վրա ինքնայիցքավորվող	հատ	4000	24000	6	Ք. Երևան, Վարդա-նանց փակուղի 8 ա	6	2018 թվականի 1-ին եռամսյակ
22	30197331/1	դակիչ, քանոնով		Դակիչ 100 և ավելի /100թերթ/ դակելու համար	հատ	11500	11500	1	Ք. Երևան, Վարդա-նանց փակուղի 8 ա	1	2018 թվականի 1-ին եռամսյակ
23	30197331/2	դակիչ, քանոնով		Դակիչ 30-50 թերթ դակելու համար	հատ	3700	14800	4	Ք. Երևան, Վարդա-նանց փակուղի 8 ա	4	2018 թվականի 1-ին եռամսյակ
24	30192210/1	պոլիմերային ինքնակպչուն ժապավեն, 48մմx100մ տնտեսական, մեծ		պոլիմերային ինքնակպչուն ժապավեն, 48մմx100մ տնտեսական, մեծ	հատ	500	5000	10	Ք. Երևան, Վարդա-նանց փակուղի 8 ա	10	2018 թվականի 1-ին եռամսյակ
25	30192220/1	պոլիմերային ինքնակպչուն ժապավեն, 19մմx36մ գրասենյակային, փոքր		պոլիմերային ինքնակպչուն ժապավեն, 19մմx36մ գրասենյակային փոքր	հատ	120	840	7	Ք. Երևան, Վարդա-նանց փակուղի 8 ա	7	2018 թվականի 1-ին եռամսյակ
26	30197234/1	թղթապանակ կոշտ կազմով		Ռեգիստր, Թղթապանակ կոշտ ստվարաթղթե կազմով, համապատասխան չափի կռնակով (ծավալով), մետաղյա ամրացման հարմարանքով, A4 (210 x297) մմ ձևաչափի թղթերի համար :	հատ	900	18000	20	Ք. Երևան, Վարդա-նանց փակուղի 8 ա	20	2018 թվականի 1-ին եռամսյակ
27	30192920/1	ուղղիչ հեղուկներ		Շտրիխ վրձին, Օգտագործվում է թղթի վրա (այդ թվում ֆաքսի թղթի) թանաքով կատարված սխալները ծածկելու համար: RETYPE կամ համարժեք, 20մլ	հատ	350	7000	20	Ք. Երևան, Վարդա-նանց փակուղի 8 ա	20	2018 թվականի 1-ին եռամսյակ

28	30192930/1	ուղղիչ գրիչներ		Շտրիխ, Օգտագործվում է թղթի վրա (այդ թվում ֆաքսի թղթի) թանաքով կատարված սխալները ծածկելու համար:	հատ	400	6000	15	Ք. Երևան, Վարդա-նանց փակուղի 8 ա	15	2018 թվականի 1-ին եռամսյակ
29	30192131/1	մեխանիկական կամ սրվող մատիտներ		Մեխանիկական մատիտ 0,7մմ	հատ	500	2500	5	Ք. Երևան, Վարդա-նանց փակուղի 8 ա	5	2018 թվականի 1-ին եռամսյակ
30	30192132/1	լրացուցիչ գրաֆիտներ՝ մեխանիկական մատիտների համար		Մեխանիկական մատիտի միջուկ 0,7մմ	տուփ	100	500	5	Ք. Երևան, Վարդա-նանց փակուղի 8 ա	5	2018 թվականի 1-ին եռամսյակ
31	30199430/1	թուղթ նշումների, տրցակներով		թուղթ նշումների, տրցակներով, 100 թերթ, 76 x 101,6մմ,	հատ	300	9000	30	Ք. Երևան, Վարդա-նանց փակուղի 8 ա	30	2018 թվականի 1-ին եռամսյակ
32	30199420/1	թուղթ նշումների համար սոսնձվածքով		Նշումների թերթիկ ինքնակպչուն /Թերթիկներ նշումների համար, կպչուն, 76 x 101,6մմ, 100 թերթ, դեղին/	հատ	400	12000	30	Ք. Երևան, Վարդա-նանց փակուղի 8 ա	30	2018 թվականի 1-ին եռամսյակ
33	30197623/1	թուղթ (միլիմետրային)		Միլիմետրաթուղթ	մետր	200	1000	5	Ք. Երևան, Վարդա-նանց փակուղի 8 ա	10	2018 թվականի 1-ին եռամսյակ
34	30197340/1	ապակարիչ		Գրասենյակային ապակարիչ՝ N10, N24, N26 և N26.6 ասեղներով կարված թղթերը քանդելու համար:	հատ	350	3500	10	Ք. Երևան, Վարդա-նանց փակուղի 8 ա	10	2018 թվականի 1-ին եռամսյակ
35	30192781/1	էջաբաժանիչ պլաստիկ		էջաբաժանիչ պլաստիկ, 5 գույն	հատ	450	2250	5	Ք. Երևան, Վարդա-նանց փակուղի 8 ա	5	2018 թվականի 1-ին եռամսյակ

36	30197230/1	թղթապանակ ֆայլերով		թղթապանակ ֆայլերով 70 էջ	հատ	1500	15000	10	Ք. Երևան, Վարդա-նանց փակուղի 8 ա	10	20[illegible] թվականի 1-ին եռամսյակ

ԳՆՈՐԴ

ՀՀԷԵԲՊՆ ՋՏՊԿ «Ջրառ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա
«Արդշինբանկ» ՓԲԸ, Նալբանդյան մ/ճ
Հ/Հ 2479000059160000, ՀՎՀՀ 00093621
Տնօրենի պաշտոնակատար

---------- Կ. Եփրեմյան
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

Ա/Ձ Աննա Զաքարյան
ՀՀ, ք.Երևան Սարկավագի 3-րդ փակուղի
տուն 2
«Ինեկոբանկ» ՓԲԸ Կոմիտաս 2 մ/ճ,
Հ/Հ 205283221591, ՀՎՀՀ 88194642

----------Ա.Զաքարյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N
«23» 03 2018 թ. կնքված
ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-Ջ-ԳՀԱՊՁԲ-18/2 -1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	30197646/1	թուղթ A3 ֆորմատի /29,7x42/				7200	10800	14400	14400	14400	14400	14400	14400	14400	14400
2	30197631/1	թուղթ A4 ֆորմատի /21x29,7/				157500	236250	315000	315000	315000	315000	315000	315000	315000	315000
3	30197232/1	Թղթապանակ արագակար, թղթյա				8400	12600	16800	16800	16800	16800	16800	16800	16800	16800
4	30197233/1	թղթապանակ, թելով, թղթյա				5400	8100	10800	100%	100%	100%	100%	100%	100%	100%
5	30197323/1	կարիչ, 50-ից ավելի թերթի համար				5500	8250	11000	11000	11000	11000	11000	11000	11000	11000
6	30197321/1	կարիչ, մինչև 20 թերթի համար				2800	4200	5600	5600	5600	5600	5600	5600	5600	5600
7	30197322/1	կարիչ,20-50 թերթի համար				2600	3900	5200	5200	5200	5200	5200	5200	5200	5200
8	30197110/2	կարիչի մետաղալարե կապեր				1550	2325	3100	3100	3100	3100	3100	3100	3100	3100
9	30197110/1	կարիչի մետաղալարե կապեր				875	1312	1750	1750	1750	1750	1750	1750	1750	1750
10	30197111/1	կարիչի մետաղալարե կապեր, փոքր				1250	1875	2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500
11	30197112/1	կարիչի մետաղալարե կապեր, միջին				2500	3750	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000
12	30197231/1	Պոլիմերային թաղանթ, ֆայլ				4000	6000	8000	8000	8000	8000	8000	8000	8000	8000

13	30192100/1	ռետին, հասարակ				1750	2625	3500	3500	3500	3500	3500	3500	3500	3500
14	30192121/1	գրիչ գնդկավոր				1750	2625	3500	3500	3500	3500	3500	3500	3500	3500
15	30192121/2	գրիչ գնդկավոր				1250	1875	2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500
16	30192121/3	գրիչ գնդկավոր				2000	3000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000
17	30192121/4	գրիչ գնդկավոր				8000	12000	16000	16000	16000	16000	16000	16000	16000	16000
18	30192720/1	գծանշիչ				10000	15000	20000	20000	20000	20000	20000	20000	20000	20000
19	30192710/1	սոսնձամատիտ, գրասենյակային				10000	15000	20000	20000	20000	20000	20000	20000	20000	20000
20	30192137/1	մատիտ, գրաֆիտե միջուկով, հասարակ				2450	3675	4900	4900	4900	4900	4900	4900	4900	4900
21	30141200/1	հաշվասարք, գրասենյակային				12000	18000	24000	24000	24000	24000	24000	24000	24000	24000
22	30197331/1	դակիչ, քանոնով				5750	8625	11500	11500	11500	11500	11500	11500	11500	11500
23	30197331/2	դակիչ, քանոնով				7400	11100	14800	14800	14800	14800	14800	14800	14800	14800
24	30192210/1	պոլիմերային ինքնակպչուն ժապավեն, 48մմx100մ տնտեսական, մեծ				2500	3750	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000
25	30192220/1	պոլիմերային ինքնակպչուն ժապավեն, 19մմx36մ գրասենյակային, փոքր				420	630	840	840	840	840	840	840	840	840
26	30197234/1	թղթապանակ կոշտ կազմով				9000	13500	18000	18000	18000	18000	18000	18000	18000	18000
27	30192920/1	ուղղիչ հեղուկներ				3500	5250	7000	7000	7000	7000	7000	7000	7000	7000
28	30192930/1	ուղղիչ գրիչներ				3000	4500	6000	6000	6000	6000	6000	6000	6000	6000
29	30192131/1	մեխանիկական կամ սրվող մատիտներ				1250	1875	2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500
30	30192132/1	լրացուցիչ գրաֆիտներ՝ մեխանիկական մատիտների համար				250	375	500	500	500	500	500	500	500	500
31	30199430/1	թուղթ նշումների, տրցակներով				4500	6750	9000	9000	9000	9000	9000	9000	9000	9000
32	30199420/1	թուղթ նշումների համար սոսնձվածքով				6000	9000	12000	12000	12000	12000	12000	12000	12000	12000
33	30197623/1	թուղթ (միլիմետրային)				500	750	1000	1000	1000	1000	1000	1000	1000	1000
34	30197340/1	ապակարիչ				1750	2625	3500	3500	3500	3500	3500	3500	3500	3500

35	30192781/1	էջաբաժանիչ պլաստիկ				1125	1687	2250	2250	2250	2250	2250	2250	2250	2250
36	30197230/1	թղթապանակ				7500	11250	15000	15000	15000	15000	15000	15000	15000	15000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են առողական կարգով:*

ԳՆՈՐԴ

ՀՀԷԵԲՊՆ ՋՏՊԿ «Ջրառ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա
«Արդշինբանկ» ՓԲԸ, Նալբանդյան մ/ճ
Հ/Հ 2479000059160000, ՀՎՀՀ 00093621
Տնօրենի պաշտոնակատար

---------- Կ. Եփրեմյան
/ստորագրություն/

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

Ա/Ձ Աննա Զաքարյան
ՀՀ, ք.Երևան Սարկավագի 3-րդ փակուղի
տուն 2
«Ինեկոբանկ» ՓԲԸ Կոմիտաս 2 մ/ճ,
Հ/Հ 205283221591, ՀՎՀՀ 88194642

----------Ա.Զաքարյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3.1
«23» 03 2018թ. կնքված
ՀՀԷԲՊՆՋՏՊԿ-Ջ-ՄԱԱՊՁԲ-18/2-1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված N 3
«23» 03 2018թ. կնքված
ՀՀԷԵՊՆՋՏՊԿ-Ջ-ՄԱԱՊՁԲ-18/2-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.